

# Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

40 ՓԱՐԱ.

40 ՓԱՐԱ.

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Կր ճրատարակուի ամեն կիրակի օրեր: Տարեկանն է կանխիկ Ա. սասիճանի բանակորդարանի անուր մէկ օտեւեկան ու- կի. իսկ Բ. սասիճանի անուր կիւ օտեւեկան ասի: Գուրս դա- ցածներուն ծախքը ստեղծիմ վրայ է: Երկու շաբաթ անցած քի- տեր կը ծախուին 3. սչ. Ի: Երասպանս քաղաքաց անուր 30 ֆրանկ: Հասց 40 փարս:

Նամակ կամ գրութիւն պետք է ուղղել սա. խմբագիր-Տեղեկի Բ. Գալուստեանի նիւնաճոցար Կաղաշու. Երասպանի խան քիւ 6 Կ. Պիղ-րեան Տղարանի կամ Պարնի գարս քրտաճոց. Պոլսո Ե. Թախր արտիչ խանարս: Անխնարձօրս Ե. Երասպան կը մեղմուին. Չեւոզիր Եւ չի արտիչ: Կոմունցիստի տաց մէկ անգամի Եւ- մար 3 սչ. է: Աւելի անգամներու անուր ստորագրութիւն կը պայ:

Թ. Ի. 14

### ԿԻՐԱԿԷ

1887 ՄԵՊՏԵՄԲԵՐ 20

#### ԲՈՒՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Աղղ. — Աղղ. — Տեւոթիւն. — Մի- շուր. — Յանանի կեանքն. — Վերջին ցարու Ն. Բ. Գալուստեան (Մանու. Բաթի- պա). — Զուարճայիք. — Աղղ. Լուրեր. — Վէպ ժու. Կրտ. աւ. Կոմունցիստի զբքի ձեւով:

#### Ա. Գ. Գ.

Պիղ-րեան Մեծ. Կարասիւս է ֆիւնտի տարբանն՝ օրիկ կը ճրատարակուի կիրակնօրեայ-Հայրենիքը՝ փոխադրը- ում է Ի Վիլնիք-փաղար: Ա. սաի կը խնդրուի Կոմունցիստի Եւ ճրատարակուի ս'ր Ե է գրութիւն յղել անդ: Կը խնդրենք այս առթիւ մեր ան- մեն յարգելի Բամանորդնէրէ - Ի Պո- լիս, յիւրապա Ե Ի Կաւաաս - օր բա- բնհանին առ մեզ հասցնել ի բեանց բամանորդացինը: Կը յուանը թէ հարկ չմար կրկնելու մեր այս հրահր:

#### Ա. Գ. Ա. Յ. Ի. Ն. ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անցեալ եօթնեկէն ալ տնչուռ ու- աանց ընտրուելու նոր Բայ. ժողովը, Բնիւնած ենք ու կը մտնենք ընդ- գիմադիր կուսակցութեան բողոքին ար- ժեքը, սակայն անկեղծարար խօսելով խիտ թեղի կը գաննենք իւրեանց ընտ- բած միջոցը: Բողոքարկուք կրնային նախարդ

Բայ. ժողովը գեր չհրամարած խըն- գիր ընել ներքին Կանանայութեան այն արամուրութիւնն՝ որոյ համեմատ Աւանայեալոց Գիւանք կը պատրու- տէ ընարեկաց շեղելի ցանկն ու կը ընտրուի Բայ. ժողովը Ե ստանդար- կել նորա վերաջննութիւնը կամ բա- բնիւնութիւնը:

Եայց նախարդ Բայ. ժողովը հը- բամարականին ընդունելութեան յե- տով երբ սիւն ընարուի նորա յաճար- դըն, բոս բնդհանուր օրինաց, իրու- ւանք չէ խնդիր յարուցանել, Կրա- զեցնել Աղղ. ժողովը Ե յետաճգել նոր Բայ. ժողովը ընարութիւնը:

Երբ ինչիւր մը կայ մէջ տեղ, կը լուծուի միշտ Ի գործադրութեան եղող օրինաց համեմատ:

Ընդհանուր սկզբունք է այս, որ շատ ճշմարիտ է, որովհետեւ երբ ինդ- րոյ ու սրտազայի համեմատ օրէնք փոխուի, ոչ մի օրէնք զր ի տեւակա- նութիւն կ'ունենայ, ոչ ազգեր, գու- տական ատեաններ ու ժողովներ կը կառավորուին Ե ոչ այ բարեկարգու- թիւն կը տիրէ:

Չենք դիտել թէ օրէնքն յայնժամ ս'րու համար պետք ըլլայ:

Այսպէս օրեանն ընդգիմադիրք՝ որոց բողոքին իրաւացի լինելն անպամ մ՝ Եւ խոստովանելով հանդերձ՝ կը յաւինք որ շատ ուշ մնացած են, այ- սինքն, ժամանակին գործի չեն ձեռ- նարկում:

Մենք չենք սղեր ա'յնքոն ծան- րանայ ընդգիմադրաց այս դարձին վրայ, ս'րքան կուղենք Ե աւելի ըն- դարձակ իրաւամբ ծանրանուլ բուն

իսկ արդի սղ. ժողովը Կիւանին վրայ, որ մահուամբ, հրամարմանք Ե փեճակաւ գաղարկամբ պակասեալ երեւոյթանայ տեղ նոր ընտրութեան խնդիրը տարկուել հեռէ չէ մատու- ցած ժողովին ուշադրութեանը: (Ա)

Մի աննեղելի զանցառութիւն է այս, որոյ հետեւութեամբ արդի Աղղ. ժողովը տակաւ կը դադարի սահմա- նադրուելու կողմեայ երեւոյթանա- կան ժողով ըլլալէ, Ե որ կ'իմէ սպալէս տակաւին շարունակել իւր հակասահ- մանադրական ընթացքը, բողոքովին պիտի կորուսանէ Աղղին փատահու- թիւնն Ե հարկ պիտի ըլլայ բուն իսկ Աղղ. ժողովը վերակազմութիւնը սրա- հանջել, որ անշուշտ աւելի աղէկ պի- տի ըլլայ, քան թողուլ որ յաւիտենա- կան ժողով մը դառնայ արդի ժողովը:

Այսպիսի սահմանադրականութիւն Ե ոչ մի անգ կայ:

Ե. սակայն տակաւին կը դանդաւա- օրի թէ ժողովարդն անտարբեր է, մինչդեռ ազգային էն բողոք մարմի- նը կը թերանայ իւր Եական պարտու- կանութեանցը մէջ:

Այս ընթացքը զԱղղն Ի մեռելու թիւն կը տանի:

Բայց ս'րու ըսել Ե ս'րու խօսիլ:

(Ա) Այստեղի է թէ մենք կը պահանջէինք նախ պակասեալ երեւոյթանայ տե- բողոքուան Ե ապա նոր Բայ. ժող- վը ընտրութիւնը:

Հարկի առջիկ, այն է, արդի սրու- բողայնց ծանրութեան Ե փափկու- թեան պատճառաւ: զոհեցնել մեր կարծիքը, բայց ահա երկու ամիսն անցած է Ե դեռ կատարուած չէ Բայ. ժողովը ընտրութիւնը:

այս առաջին անգամը չէ որ կը գրենք այս խնդրոյ վրայ :

Կերևայ թէ մեր Ազգ. ժողովն սկսած է այլ ևս բանի տեղ չգնել Հասարակաց Կարծիք ըստած բանն , որ Ազգին ձայնն է :

1885 Փետրուարի մէջ պիտի կատարուէր Ա. վիճակի ընտրութիւնըն , որ հազիւ կիսովի կատարուած է , իսկ Բ. վիճակի ընտրութիւն ընաւ չէ կատարուած :

Նոյնպէս , տարիներէ խլեր չեն կատարուած վախճանեաց և հրաժարելոց տեղ նոր ընտրութիւն :

Այս հաշուով , դուցէ 60է աւելի ընտրութիւն պիտի կատարուի :

Սակայն երբ :

Երբ արաի տիրապետող ժողովը կամի :

Մենք ալ որ պատիւ ունինք Հասարակաց Կարծեաց թարգման լինելու , կը կամինք յետ այսորիկ կոչել զայդ ժողով ինքնակոչ ամիրայից ժողով :

Տեսնենք քիչ մ'ալ թէ ինչ կ'ընէ մեր Պատկ. Կրօն. ժողովը :

Իւր շարթական նիստերը կը շարունակէ կանոնաւորապէս :

Խիտ լաւ , կը հարցնենք ոտկայն թէ ինչ եղաւ Իզմիրի 300ից հանրագիրը :

Մեր ստացած ստոյգ տեղեկութեան համեմատ՝ յիշեալ ժողովը քըննելով ու տեսնելով որ նոյն հանրագրերն մէջ Դեր. Մելքիսեդեկ Սրբազանի մասին «անհաւատ» և «անկրօն» ըստած է , անշուշտ Ս. Հարց խղճին դպեր ու այդ կէտը բողբոլին կարեւորութենէ դուրկ համարեր է . իսկ միւս մասերուն համար ալ որոշեր է Բազ. ժողով ընտրուելէ յետոյ՝ խառըն ժողովոյ մէջ նկատողութեան առնուլ :

Մենք ալ կ'ընդունինք թէ Ս. Հարց խիղճն իրաւունք ունի , բայց Ն. Դերպատուութեանց խիղճն ինչ զգաց կամ կ'զգայ երբ Շահապղեանի կողմէ Ազգին ընդհանուր Հայրապետին՝ Վեհ. Տ. Տ. Մակար Ս. Կաթողիկոսին նկատմամբ բողբոլին անվայել ու գայթակղական դէպքեր ու հրատարակութիւններ տեղի կուենան , և այդ արեղան կը շարունակէ իւր ըմբոստընթացքը նոյն իսկ Ազգ. Իշխանութեան դէմ , որոյ մէկ մարմինը նոյն

ինքն՝ Պատկ. Կրօն. ժողովն է :

Հանրագրին մէջ կային կէտեր , որ ընդհանուր են , ինչպէս են յիշատակութեան և Շահապղեանի խնդիրք , որոց առաջնոյն համար կրնար Դեր. Մելքիսեդեկ Սրբազանէ դրաւոր բացատրութիւն պահանջուիլ , իսկ երկրորդին համար սոշոյնիլ վեշտոնն « թագրի » մատուցանել Բ. Դրան , և մնացեալ ամբատանութեանց համար ալ յանձնարարել Իզմիրի Պատ. Գաւառ. ժողովին ըստ օրինի քննութիւն կատարել , և եթէ հարկ էր , մի քննիչ ևս զրկել , որպէսզի Իզմիրի նման կարեւոր գաւառ մը ընդ երկուք չյուզուի և կիրքերը չբարբորին , որովհետեւ յոյժ վստահելի , արժանահաւատ և ընդհանուր յարգանաց արժանի ազգայնոյ մը կողմէ մեր ընդունած տեղեկութեանց համեմատ - զորս կը հրատարակենք այսօր - նոյնպէս պատուաւոր և ազդեցիկ ազգայնոց մեծ մաս մ'ալ ընդդէմ հանրագրին՝ կը պաշտպանէ դԴեր. Մելքիսեդեկ , որ եթէ կամովին իսկ ուզէ հրաժարիլ իւր պաշտօնէ և մէկնիլ , պիտի արդիւուի , որովհետեւ վստահութիւն և զօհունակութիւն կը յայտնէ Ն. Սրբազնութեան առաջնորդական պաշտօնավարութենէ :

Այսու կը բացատրուի Զմիւռնիոյ խնդրոյն կարեւորութիւնն և ստիպողութիւնը :

Ուստի , ո'րչափ յապաղի անխիճական կարգադրութիւն մը , բնականաբար այնչափ կը սաստկանայ խնդիրն ու կը ծանրանայ , որ հարկաւ հաճելի չէ :

Փափագելի է ընդհակառակը , վտտով վերջացնել զայս անհաճոյ խնդիր և ջանալ հաշտեցնելու երկու կուսակցութիւններն ալ , որպէսզի սորա իրարու դեմ չլինուին , և Իզմիրի գաւառը խռովութեան թատր չհանդիսանայ , յարգելի անձնաւորութիւնք չըքանին ու չզղուին ազգային պաշտօններէ և տեղական ազգային դործերն ու կրթական հաստատութիւնք չվնասին :

Եթէ Պատկ. Կրօն. ժողովն ձեակերպութեանց պատճառաւ չլինայ կամ չուզէ այս մասին ո'ր և է տընօրինութիւն ընել , կարող է Ամեն. Ս. Պատրիարքն իւր պատասխանատուութեան ներքե դործել , որում Սահմանադրութիւնը կատարեալ իրաւունք կուտայ :

Արդ , սիրելի է մեզ յուսալ թէ Ն. Բարձր Սրբազնութիւն մեր այս արգար տնկալութիւն ՚ի դերն չհաներ յօգուտ Իզմիրի կարեւոր գաւառին և այսու իւր օգտակար գործոցը վրայ կուգայ յաւելալ մի այլ ոչ նուազ օգտակարադոյն գործ :

### Մ Ի Զ Ո Յ Ք

Թէ ո'ր կարգի եկեղեցականք կըրնան օգտակար ըլլալ ՚ի գաւառն ճիշդ լիժաց և Ամերիկացի միսիօնարաց ջանքերն ի դերն հանելու համար :

Ահա կարեւոր խնդիր մ'ալ այս է որ պէտք է հետաքրքրէ Ազգ. Վարչութեան ուշադրութիւնը :

Նախ պարտինք զիտնալ թէ ճիշդութիւն և միսիօնարք ո'րպիտի կարողութեան և հմտութեան տէր անձինք են :

Յիշեալք բացի իրենց պաշտօնին և կոչման վերաբերեալ հմտութենէ՝ ունին հաստատամտութիւն և ատիպլինի (կարգապահութիւն) հետևող անձինք են , և ծանօթութիւն ունին բժշկութեան , ու այլևայլ ճիւղերու , և որ աւելին է , զիտեն սիրաւ շահելու , դրուելու և պարագայէ օգուտ քաղելու միջոցները :

Ուստի , չկարծուի թէ պարագ ուղատարկ դըլուխ մարդիկ են :

Մեր նախնի Ս. Հայրերն ալ իրենց ժամանակին գիտութեանց քաջահմուտ անձինք էին :

Բացի աստուածաբանութենէ՝ ծանօթ էին բժշկութեան , արհեստից և գիտութեանց , գիտէին ժողովրդեան պիտոյքը , կը ճանչնային տեղական հանգամանքներն ու պահանջները , սրտերնին կապուած էր Ազգին և Եկեղեցւոյ հետ , չէին խորհեր իրենց օգուտն ու հանգիստը , այլ կը ծառայէին Ազգի և Եկեղեցւոյ օգտին , կատարեալ եկեղեցականներ էին և հայր հաստակաց ու քաջ զիտէին ժողովրդեան հետ խօսելու լեզուն և նոցա սիրան և զգացումները վառ և կենդանի պահելու եղանակը :

Ուստի , երբ եկեղեցականք արթուն կը հսկէին և չունէին ուրոյն շահեր ու պահանջներ բացի Ազգի և Եկեղեցւոյ շահէն ու պահանջներներէն՝ ո'չ վտանգ կար ու ո'չ կորուստ , զի տեսնելով ժողովուրդն որ իր եկեղեցականք



ուշարկութեան վրայ Խրիմեան Պատրիարք ընտրուեցաւ (1) :

Ժողովուրդը ջերմապէս կը փափաքէր նաև Երեսփոխանական Ընդհանուր Ժողովոյ վերակազմութեանը, զի կորուսած էր իւր ազդեցութիւնը, զի չունէր իւր ամբողջութիւնն և զի մասնական ընտրութիւնք չէին կատարուած :

Օտեան Ժողովուրդին այս արդար պահանջման ալ գոհացում տուաւ, ինչպէս կուտար ամեն անգամ, երբ տեսնէր թէ նորա (Ժողովուրդին) բողոքներն արդար ու օրինաւոր են :

Օտեան իւր Վարչապետութեան ամբողջ վրայ սկիզբէն մինչև վերջ անապարտ պահեց իւր մեծ Ժողովրդականութիւնը :

Խրիմեան Պատրիարք բաղմելէ յետոյ Ժողոց վարչական պաշտօնն, զոր այլ ևս երբէք չ'ստանձնեց :

Գրեթէ երբէք չէ եղած Վարչութիւն մը — բացի նուրեան Վարչութենէ — որ Օտեան Վարչութեան չափ փափուկ, ծանր ու տաղնապալից խնդրոց պատահած ըլլայ և սակայն այնքան բաղմաթիւ աղմկալի խնդրոց մէջէ դուրս ելնէ առանց իւր վրայ պատասխանատուութիւն բերելու՝ պաշտպանելով միշտ Ազգին դերագոյն շահերը և միշտ կրկնապատկելով Օսմանեան բարեխնամ տէրութեան վստահութիւնը Ազգին վրայ : (Շարունակելի)

ՎԵՐՁԻՆ ԳՄՐՈՒՆ

Գարունն է եկել նախշուն թւերով, նախշուն թւերը պէս պէս ձևերով, Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ, Վարդ, մետակ, շուշան անուշ հոտերով, Երկինք ու երկիր քեզ տօնեն, գո'րուն : Ձի ևս քան զամեն եղանակ սիրուն, Նա անձրև ցօղէ՝ առատ ի վերէն, Դա օրհնել տայ քեզ եկուր հաւերուն : Ոռիւ արևը փայլ քեզ վերէն, Կենտարեր հովը փըշէ ի լերէն : Ախ, աղնիւ գարուն, եղանակ սիրուն, Արդեօք դու ի՞նչ բազմ բերիր ինձ Տէրէն : Դիտաքարը երթամ ի պարտեզ այգուն, Ախ ու վախ քաշեմ ևս անդ օրն ի լուսն, Ձիկայ ինձ հանդիստ, ցնձութիւն սրտիս, Ես վազ եմ մուցել զի՞նչ անդորր է քուն :

(1) Բ. Գուռը չէր ուղեր վտերել Խրիմեանի ընտրութիւնը՝ կասկածելով իւր վրայ, բայց Օտեան վստահեցուց զԲ. Գուռը թէ Խրիմեան տէրութեան հաւատարիմ բարձրատիճան եկեղեցական մ' է :

Մեռած պատանքած դետնին կեանք տուար Տերութեան ծառին ստուերախիտ արար, Բեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր, Ի՞նձ մենակ խղճիս էսպէս մտայցար :

Առաջ գնա, գա'րուն, գէպ ճիւղան ի խոր Գնա կանանչցո'ւր դու անդ սար ու ձոր, Որոց անհամբեր քեզ կան՝ տո'ւր բարև, Բ'ուրախ դալտեամբ նոցա զուարճացո'ւր : Կուզաս դալ տարի, դու ինձ կը գտնես, Ոչ ի մեր այգին և ո՛չ ի սարտեզ, Այլ անպարթ քընով հողի տակ պուռած, Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես,

Ռոֆ. Պարթևեան (Գամառ-Բախչա)

ՁՄԻՌՆԵՍԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Սհաւասիկ այն կարևոր նամակը գտրմէ խօսեցանք թերթիս այս աւուր Ազգ. Տեսութեան մէջ և զոր կը հըրատարկենք կատարեալ անկողմնակալութեամբ :

. . . Խմբագիր

« Ձեր կիրակնօրեայ Հայրենիքի սեպտ. Յին հրատարակեալ թուոյն մէջ, Ձմիւռնիոյ ինդրոյ մասին, խորհրդածութիւն մը կարգացի :

Ձիս ըստ բաւականին կը ճաչաք, ինչպէս ուրիշ ինդրոց մէջ, նոյնպէս ալ այս ինդրոյ մէջ միմիայն ճշմարտութեան և իրաւանց կողմնակիցներէն եմ և ոչ այլ ինչ, և այս կերպով պէտք է որ ըմբռնէք զըրութեանս ողին :

Ինչպէս Ձեզի՝ նոյնպէս համայն Պոլսեցւոց համար դեռ անխատ և առանց պայցոյցի և հետեւաբար տարակուսելի գանուող հանրագրութեանց վրայ յիշելով՝ Ս. Առաջնորդը կը գատէր ու կը գատապարտէր :

Իբր տեղեկութիւն կը հաղորդեմ և ապահով եզր թէ նոյն հանրագրոյ ստորագրութեանց մէջ, ամենէն մեծ կարևորութիւն ունեցող կարելի է քսանի չափ ստորագրութիւնք կան, որ մասնաւոր և անձնական հակառակութեան և սխալակալութեան պատճառաւ գրուած են և այդ պատճառները կրնան մի առ մի թուուիլ. մնացորդն նոյն քսանի ազդեցութեան ու ճշման ներքև ստորագրած են առանց հանրագիրը կարգալու և ամանք ալ առանց դոնէ նորա պարունակութեան մասին գաղափար մ'ունենալու դրած են իրենց ստորագրութիւնը :

Յետոյ պէտք է զխանալ թէ ոչ միայն ամբողջ պաշտօնական մարմին

ներն՝ այլ Ազգին այն մասը՝ որոյ 'ի Կ. Պօլիս ողջամիտ անունը կը տան, և որ աստ Հայոց խիստ ստուար մեծամասնութիւնը կը կազմեն և որք ոչ գրագիր են և ոչ կախում ունեցող անձինք՝ այլ անկախ գիրք և գործ ունեցող ազգայիններ են, հոգւով մարմնով Ս. Առաջնորդին յարեալ են, և ըստ ամենայնի գոհ :

Պաշտօնական մարմինք երբէք այսչափ կանոնաւորապէս կազմուած էին. այժմ ունինք Երեսփոխանական Ժողով մը որ Իզմիրի Հայոց հարստութեամբ, խոհեմութեամբ և ազդեցութեամբ և ազգասիրութեամբ փայլող անձնաւորութեանց կէտն իւր մէջ կը պարունակէ :

Արդ, տեղոյդ լրագիրք լաւ կը նեն եթէ այս տեսակ բաժանումներ փոխանակ գրդուելու՝ ջանան հանդարտեցնել և դոնէ գատապարտեւ առաջ՝ դատին վախճանին սպասել :

Կարևոր կը համարիմ յաւելուլ նաև թէ՛ տեղոյդ պաշտօնական մարմինք պէտք է ապահով ըլլան որ Իզմիրի Ժողովուրդը չախտի թողու որ իրենց Ս. Առաջնորդը չարչարուի, ուստի պիտի գործածէ այն ամեն կանոնաւոր միջոցներ, զորս Սահմանադրութիւնն և այլ գոյութիւն ունեցող օրէնքներ իւր տրամադրութեան ներքև կը գնեն :

Սհա իրաց վիճակը, զոր նկարագրելով՝ Մնամ յարգանքօք 8 Սեպտ. 87 \* \* \*

Երևանի Պատրիարքութիւն. — Մեծ. Նամակագիր էֆնտիին յայտնած իրողութիւններն ունին կարեւորութիւն, զի կը բացատրեն իրաց վիճակը և կը յայտնեն մեծամասնութեան փափազն ու տրամադրութիւնները :

Մենք ալ կը ճանչենք զԳեր. Մերթիտեղեկ Սրբազան որ ուսեայ, կարող և արժանաւոր եկեղեցական մ'է և զոր մենք Լայսի մէջ կաթողիկոսական երեք ընտրելիներէ Գ. ը նշանակած էինք :

Եթէ այժմ կայ պարագայ մը, յորում կ'ստիպուինք մերթ ընդ մերթ քննադատել ու ցաւ յայտնել, այդ ալ կը վերաբերի յիշատակութեան և Շահպաղեանի խնդրոց :

Ն. Սրբազնութիւն և համայն իւր

համակրողք կրնան վատահ լինել թէ այդ երկու խնդիրք իւր համբաւոյն մեծապէս ֆրատած են և դայթակզողները եղած են անոնք՝ որ Ն. Սրբազնութեան նկատմամբ սէր, յարգանք ու համարում կը տածէին և որք իրենց դիրքով, ազդեցութեամբ, պատըւաւորութեամբ և ողջմտութեամբ հանրածանօթ են և կը կազմեն Ս. Ղզին ստուար մեծամասնութիւնը :

Սակայն Ն. Սրբազնութիւն կրնայ իւր ֆրատեալ վարկը վերահաստատել և վերաջին արժանանալ ընդհանուրի համարման ու համակրանացը՝ յիշատակութեան ձևին մէջ հետևելով ազդովին ընկալեալ սովորութեան, (եթէ ստոյգ է թէ Ն. Սրբազնութիւն սարքեր ձևով կը յիշատակէ Ս. Կաթողիկոսի անունը եկեղեցւոյ մէջ և կամ տարբեր ձևով յիշատակողներն յուզութիւն չը հրաւիրէր) և թէ զՆահպապրեան անմիջապէս Պօլիս զրկելով ի բացառութիւն :

Ասոնք այնպիսի կէտեր են, որ հանրագրին հետ բնաւ առնչութիւն չունին, ընդհանուր խնդիր դարձած են, և որ կը յուզեն ամենուն հետաքրքրութիւնը :

Դալով հանրագրին, ստոյգ է թէ չենք կրնար որչափ կարծիք մ' յայտնել և դայն հիմ բռնել դատապարտելու, քանի որ դեռ քննութիւն կատարուած չէ. ուստի պարզ ամբաստանութեան անդին չանցնիր, և որ կըրնայ սուտ ու անհիմն և կամ ստոյգ ու ճշմարիտ լինել, որ հարկաւ քննութիւնն ու դատաստանը միայն պիտի երևան հաննն :

Սակայն, ըստ մեզ՝ փոխանակ քննութեան ու դատաստանի ենթարկելու զինդիրը որ գուցէ կիրքերն առաւել ևս զրգուելու և կամ ցրտութիւն տուած բերելու ծառայէ, լաւագոյն է հաշտութեամբ վերջացնել առանց մէկուն կամ միւսին պարտութեան հարկ թողելու :

Այս է աղին Բղմիրցիներէ սպասուածն և զայս կ'առաջարկենք անկեղծօրէն, որովհետեւ երկու կուսակցութիւններ ալ եղբարք են և անշուշտ նախանձախնդիր են ազգային օգտի :

Ձեկոց

Այսօր տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կրցած հրատարակել Պատմական յօդուածն և նախորդ թըուէն մնացեալ Զմիւռնական գործեր մակագրով նամակի շարունակութիւնը :

ԶՈՒՍՐՃԱՆԻՒԹ

ՍՄՈՒՍՆՍՍՈՒՂԱԿՍՆ

(13 Թուէն)

(Տիկինն առանձին) .

Գնաց, պէտք է որ ես ալ երթամ. հոս այլ ևս անտանելի է իմ կեանքը :

Չ'էի ուզեր թողուլ իմ ամուսնական յարկն, ուր եղայ ամուսին և մայր :

Գորովանօք սերեցի զինքը, ինչպէս որ պարտքս էր, այլ նա բնաւ անտարբեր գտնուեցաւ իմ սիրոյս, հաւատարմութեան և աղաչանացս հանդէպ՝ երբէք ՚ի դուժ չչարժեցին զինք իմ արտասուքները՝ որ հեղեղի նման կը վաղէին աչերէս :

Միշտ նոյն, միշտ անդուժ և միշտ անպարտաճանաչ ու անհաւատարիմ :

Ո՛չ, ո՛չ, կին մը՝ տկար արարած մը չկրնար տոկալ :

Այլ ես շատ համբերեցի, և այժմ մարդիկ եթէ մանանխոյ հատի չտի դուժ և մտքը ինչ արդարութեան զգացում ունին, պէտք չէ որ մեղադրեն զիս թողելուս համար իմ ընտանեկան յարկը՝ որ կատարեալ տանջանարան մ'է և բաժնուելուս համար այնպիսի ամուսնէ՝ որ դահիճ մ'է :

Դահիճ, ինչ կ'ըսեմ. դահիճը գէթ մէկ վայրկեանի մէջ կը կատարէ իր պաշտօնը, և ներքին չէ իրեն չարչարել զոհը, դատապարտեալը :

Երբէք թերացած չեմ ամուսնական պարտուցս մէջ, միշտ հաւատարիմ գտնուած եմ. խիղճս հանգարտ է :

Ո՛րեմն, ո՛վ պիտի դատապարտէ զիս մեկնելուս համար, որ հարկ մը դարձած է :

Եւ ինչո՞ւ դատապարտեն անմեղ մը, արդար մը և վերջապէս՝ զոհ մը :

Եւ մի՞թէ մարդիկ այնքան անդուժ ու անարդար են :

Ո՛չ, ո՛չ. դժուրութիւն անմեղին և իրաւունք արդարին համար :

Կին մը՝ որ պարկեշտ, հաւատարիմ ու արարտաճանաչ է, պէտք չէ որ չարչարուի անդուժ, անպարտաճանաչ ու անհաւատարիմ ամուսնէ, զի ամուսնութիւնը տանջանարան չէ :

Կինն ալ մարդ է, կինն ալ ունի սիրտ, զգացում, արժանիք և յատկութիւններ :

Եթէ այս մարդը տունէն դուրս ունի աշխատութիւններ, կինն ալ տանը մէջ ունի աշխատութիւններ, և բան մ' ալ աւելի, որովհետեւ զաւակաց հոգն ալ է իր վրայ :

Մրդ, ո՛ր օրէնսդիրը, ճշգրեցէք ու յարմարցուցէք ամուսնական օրէնքները արդի պիտոյից ու սրահանջմանց :

Մեկնեցաւ տիկինը, գնաց, բաժնեւեցաւ իր ամուսնական յարկէն, այլ ինչ զգաց արդեօք և տակաւին ինչ կ'զգայ իւր սիրտը :

Ձգա՛լ, ա՛հ ինչ դժուարին բան է զգայուն ըլլալ և ստիպուիլ խեղճել իւր զգացումներ :

Ո՛վ մարդիկ, ո՛վ բարք :

ԿՕԼՈՇԿԱ

Յանցանքը միայն անձրեւինը չէ, արեւն ալ յանցաւոր է որ այս հինգչարթի օր սաստիկ տաք ըրաւ, որով փափկամարթ ու փափկամարմին Երեսփոխան էֆէնտիներէ շատեր չկըրցին դալ ժողովի :

Դժբաղդարար այս պարագան նախատեսեալ չէր, բայց հիմա որ յայտնի եղաւ, Մայր-Ղիւանը պարտի յետ այսօրիկ հրաւիրողաց հետ մէյմէկ քուքուէթալը մաշխախ անձրեւի և մէյմէկ ալ ճերմակ հովանոց արեւի համար զրկել, որպէս զի Տեարք Երեսփոխանը անձրեւէ ու արեւէ չնեղուին ժողովի դալու համար :

Այս բան անհրաժեշտ է, որովհետեւ այս անդամի բացակայից մէջ կը նշմարուէին այն Երեսփոխան Տեարք, որ անձրեւին ժողովի չեկող Երեսփոխան Տեարք գէմ կը բողբէին. բայց այս անգամ որ անձրեւ չկար, իրենք բացակայ գտնուեցան անշուշտ արեւի պատճառաւ :

Ինչ բսել, կան Տեարք Երեսփոխանք որ անձրեւէ չեն աշործիր, կան ալ որ արեւ չեն սիրեր (կ'աղաչենք, թիւրիմացութեամբ ճշմարտութիւնը չը հասկցուի) :

Երկու կողմն ալ ՚ի հարկէ իր պատ-  
ճառներն ու իրաւունքն ունի, զորս  
յարգելի պարտաւոր ենք, որովհետեւ  
Ազգային Երեսփոխան են :

Բողոքողներու մէջէն ալ բացակա-  
ներ կային, բայց ունէին իրենց աէ-  
միրապաշ ներկայացուցիչները, որ ազ-  
գասիրաբար արեւ ու անձրեւ առոչ  
ինչ կը դրեն, որովհետեւ սկզբունք  
ունին և որք իրենց սկզբունքին հա-  
մար շատ բան կը զոհեն :

Ժողովը բացուեցաւ զանգակահա-  
րութեամբ ու աղօթքով :

Օրակարգն էր Ատենապետաց Դի-  
ւանի կոչուչան :

Հակառակ բազում արգելքներու՝  
զորս կը յարուցանէին արագիւր, կո-  
չուչան ելաւ վերջապէս . Ահ հառ աղ-  
ւորիկ ու կայտառ փիլիճներ, որոնց  
ամենն ալ կը հաւնին :

Ժողովը սիրեց ու գգուեց իւր Ա-  
տենապետաց Դիւանի կոչուչային փի-  
լիճները և որոնց զանոնք մեծցնելու  
խնամքը ստանձնել :

Բողոքողը պայտացած են՝ ոչ թէ անոր  
համար որ փիլիճները իրենց ճաշակին  
անյարմար են, այլ անոր համար՝ որ  
կոչուչան հանելու ձեւն ու եղանակը  
իրենց ուղածը չէր :

Ուստի, վերտօնին բողոքեցին, և  
անշուտ չէին կրնար չբողոքել, որով-  
հետեւ սկզբունք ունին, և եթէ չբողո-  
քէին, ՚ի հարկէ իրենց սկզբունքին գէմ  
շարժած կ'ըլլային :

Բողոքելով վշտացուցած չեզան ի-  
րենց սկզբունքը, բայց արդեօք Ատե-  
նապետաց Դիւանի փիլիճները վշտա-  
ցա՞ն և վիրաւորեալ կը նկատե՞ն ի-  
րենց դիւրազգածութիւնը :

Եթէ այնպէս է, կը խնդրենք ի-  
րենցմէ՝ որ հիմա Ազգին փիլիճներն  
են, ազգասիրաբար բարեհաճին իրենց  
գիւրազգածութիւնը վիրաւորեալ չնը-  
կատել, որովհետեւ անշուշտ փափկու-  
թեան գէմ է մեռատան բողոքողաց  
խաթըր շինելու համար անդին մեծա-  
մասնութեան խաթըր կոտրել :

ՄՐՅԱՆԱԿԱՐԱՇԻՅՈՒԹԻՒՆ

Գլխաւի-Քղթակից Երեսփոխան է-  
ֆէնտիին . - Ոսպեղէն ճաշակ մը :

Քըթըրիկ Երեսփոխան էֆէնտիին . -  
Բուքլա պէպէք մը :

Չարիֆ-Չիւրաֆէ Երեսփոխան է-  
ֆէնտիին . - Շիշէ մը լավանտա :

Պարոնիկ Երեսփոխան էֆէնտիին . -  
Ներքին կանոնադիր մը :

Չըթըրըլըմ քօքօնա Երեսփո-  
խանին էֆէնտիին . - Թիւրնիւր մը :

Էսէֆէնիկի վէ տէհչէթամիկ Երես-  
փոխան էֆէնտիին . - Փառաւոր ապ-  
տակ մը քթին բերնին :

Մենծ-ազա Երեսփոխան էֆէնտիին .  
- խատիֆէլի խօլթուխ մը :

Ո՞Վ Է ԱՅՆ

Որ վարչական աթոռի վրայ կը մեծ-  
նայ, իսկ երեսփոխանական աթոռի  
վրայ կը պղտիկնայ :

ՁՈՒՆՇՏՅԱԿԱՆ ԲՅՈՒՄՐԱՆ

Բարոյական . - Ինչ ըլլալը զիմնալ  
ուղողը թող Մանգուլէ կարգայ .

Յլթըրաթլար . - Ազգ . Պատրիա-  
քարանի գրամահաւարին ոտքի ամանը :

Կատաղի . - Հայր Տէվրիչին Լեզուն  
Մեծանձն . - Պոյը մենծ մարդ :

Ազգասէր . - Լեզուն նայէ և ոչ  
սիրար :

Քօրսէ . - Չարիֆ երեւալու համար  
կանանց կամաւոր շարչարանքը, ուր-  
կէ անդին իրենց գերեզմանը շատ հե-  
ռու չէ :

Թիւրնիւր . - Համետ, զօր չափի  
գործածէին կանայք, եթէ կրնակնին  
ալ երկու աչք ունենային :

Սիւս . - Կանանց արժանիքը, որով  
կը փայլին :

Պերճախօս . - Մօլուխ արմամաճա-  
սընա մախարայի պէս կը ըլլ խօսք  
ընող :

Առաքինի . - Կուզես նէ ֆէնտիին  
փնտռէ :

Մեկենաս . - Դու միայն կաս,  
վախ օր տահա ծարն էս ծրարոյ :

Վեհանձն . - Չգուշացիր որ բան  
մը չէրթայ վրայէդ :

ԿՆԱՅԻՆ ԲՄՐՈՅԱԿԱՆ ԱՌԾՄՆԵՐ

Տուռքա սըլր կոցէ, արբայինա կող  
մի պաներ :

Խենդը խենդին քովը կապես նէ  
եա առոց կառնէ, եա բարոց :

Նինէ խաթսէն, դուն խրատ տա-  
լէտ պէրի կատուն օխտը ճանճ պըռ-  
նեց :

Ծանրը կեցիր օր լինարը կաս :

Քեզի կինով էս ըսեն նէ, քիչ մըն  
ար պատը պանէ տէ անանկ քալէ :

Պագուտ անունովը մի պարծենար,  
նայէ օր տուն քու անունովտ պարծե-  
նաս :

Սօխ չեմ կերեր օր սիրտս էրի :

Օտուըներտ եօրզանխ կէօրէ էր-  
կնցու :

Վազող ծինը կերը կեւեյցունէ :

Մառկա ամուր պանէ օր ան ար  
քեզ պահէ :

Պ. ԲԱԹԱՌՈՒՅԻՆ ՆԱՄԱԿԸ

Մուշու զաղէթածի,

Քու պատուական խաղէգայիտ մէ-  
ջը կնիկներուն թարաֆէն գրված Շո-  
ղակաթ տուտուլին մէքուտը կար-  
գալով անցած շարժու՝ մեր արխատաշ-  
ներուն հետ վախա հախ տըվինը ոչ նէ,  
հալ պուքի հաթը մինակ կնիտոցը չէ,  
հալսը էրիկմարդիկներ ալ կան :

Մէսէլա, կնիկ կայ քի էրկանը  
հալէն չի հասկնար, չունիմը մտիկ չը-  
ներ, ալազը օլտուխճա պիր տիւղի  
պեր կը կանչէ լծագէ շարթա, մանթօ,  
ֆիտան, վէ էլտիվէն կուղէ, կեսուրծը  
քովը չի կենար, դատ տուն տեղ կու-  
ղէ, սա կուղէ, նա կուղէ, կուղէ օղ-  
լու կուղէ, վէլ հատը կուղէ :

Ընես նէ, քէսէսար էֆէնտիին խայլ  
չ'ըլլար, չընես նէ արուաըլին սօնը  
չի գար, արպէտա մըն է կը բրդի,  
Փալանին էրիկը աես ի՞նասար կ'ընէ կօր,  
տուն մարդ չէ՞ս, չունէիր նէ լծո՞ղ չի  
կարգուէիր, կարգուէլը խօլա՞յ սյուն  
կիտար, կ'ըսեն . կլտի ունիս նէ տի-  
մայուր :

Ֆալանը ըսածնին կը ճաշանը,  
էրկու ճէպը պէնտէն պէթէր ՚՛ փարա  
չունի . իրաւ կ'ընէ կօր ամա՝ ինտօր  
կ'ընէ կօր նայինք, ի՞նք է ընողը :

Խաղէթածի ազա, էլէր կլտի կը  
ցտացունենը կօր նէ աֆ կ'ընես, Ֆա-  
խատ տանը պէեան ընելուս սէպէպը  
ան է քի, էրիկմարդիկ ալ էւէլ էւէ-  
լօր տէրտ ունին, օրթալըլին հալը իշ-  
տէ կայ ու կերեսայ . ամիս կ'ըլլայ քի  
սիֆտահարը խանութ կը կոցենը կօր-  
առաըլնէ մինչուկ իրինկուն արխաճի  
խումրուտի պէս կը մտմտանը, իրի-  
կուններն ալ տուն էրթանը նէ մինչեւ  
լուս տըռ արու մտիկ ըրէ . էթ մէքճին,  
պախալը, խասապը, զարգալաթճին,  
փատը քէօմիւրը մըտմրտալնիքէն՝ մէյ  
մըն ալ սիւսը, ալաֆրանկան մտմտալու :

Մտնտաս տմա, զի քո է կարողութիւն, չի մտնտաս, առնին սէմթը էր թալու չէ :

Մէկը կ'ընէ, մէկալն ալ անոր հետեւակ ըլլալ կուզէ, վոյ մեխկիս, կ'ըսէ, ան ըրեր է, էս ինչո՞ւ չ'ընեմ, էս ալ կնիկ չեմ մի, կենճ չեմ մի, անկէ վա՞ր կը մնամ :

Ի՞նչն բան չունիս նէ հասկցու քի՛ պէ պապամ, անոր էրկանը հալին վախտին ծառք կուտայ, թալուզ դադա պադաս երթթըլըր. մտիկ ընողը վո՞վ է, չափ ճանչմողը վո՞վ է :

Վէլհասըլ, մուշու խաղէթածի, աս հալը անվալին վրայ շատ մը տիւշիւն միջ ըլլալէն ետքը՝ անպապճա խարար տվինք աս մէկաուսը կրելու քի խաղէդայլա մէջ տէրճ ընես պարէ Պատրեարքարանը նստողներն ալ մեր հալը հասկընան չարէ մը կանան, վէ դպրատունի վարժապետները քիչ մըն ալ էքոնովիս վէ չափ ճանչնալ սորուեցունէն ախճիկներուն :

Էյէր Պատրեարքարանը սա անիւ ծած մտան պարթիթը նղովէ վէ բանա-

դըրէ նէ, պէլքի քիչ մը ֆայտա ընէ : Թախըմ մը տէրալիներուն թարաֆէն՝

ԲԱԹԱՐՈՒՑ

Ճանտէրէն վախուս ամուռն քանին ըլլալը չի հարցուցի :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգ. ժողովը իւր այս հինգշաբթի աւուր նստին մէջ հուսկ ապա կատարեց Քաղ. ժողովոյ ընարութիւնն հետեւեալ կերպիւ.

- Ապրո Սահակ էֆէնտի
- Թորոսեան Յովհաննէս էֆէնտի
- Կիւլպէնկ Պատրիկ »
- Մարտոտեան Սիմոն պէյ
- Սվածեան կարապետ էֆէնտի
- Հաղարեան Կարապետ »
- Չայեան Իլիաս »
- Աղնաւորեան Յովհաննէս »
- Բախամաճեան Կարապետ »
- Սըրահամեան Սարգիս »
- Գարբիէլեան Գարբիէլ »
- Հաճեան Խաչիկ »

Մարկոսեան Գրիգոր »  
Ասլանեան Մանուկ »

— Իզմիրէ թղթակցութիւն մը մեզ կ'իմացնէ թէ Սպարթալեան Վսեմ. Յովհաննէս էֆէնտի ևս վշտացած է, իսկ Մեծ. Կարապետ էֆէնտի Սպարթալեան և Մեծ. Յ. Վէմեան էֆէնտի հրաժարեր են տեղւոյն Գաւառ. ժողովոյ տեղամակցութենէ : Թէ ն. Վսեմ. մութեան վշտանալուն տեղի տուող պարագան և թէ յիշեալ Մեծ. անձանց երեսփոխանութենէ հրաժարին ընդհանրապէս ցաւ պատճառած է տեղւոյն ազգայնոց :

— Իննաբսեան Գեր. Հմայեակ եպիսկոպոս վաղը Սամոթիայ Ս. Գէորգեկեղեցին հանդիսաւոր Պատարագ պիտի մատուցանէ :

— Նէնի-գաբուի մէջ աշխոյժ երիտասարդներէ բազկացեալ մասնախումբ մը կազմուած է որ հանդանակութիւն պիտի կատարէ թաղին եկեղեցւոյն համար նստարաններ շինելու և գլխաւորաբար նպաստելու Ս. Առա-

և արդարատիրութիւնը կը ճանչնամ, բայց հակառակ խղճահարութեանցդ՝ ՚ի զրկանս Մաքրանի պիտի ստիպուիս օժտել Օուէլին, քանի որ կինդ զոյգ կը պահանջէ. կը բաղձամ մասամբ ինայել քեզ անարդարութեան մը խղճի խայթն՝ զոր ի հարկէ ստիպեալ ՚ի զորժ պիտի դնես, թէպէտ զայրացմամբ :

— Ի՞նչ ըսել կ'ուզես. — հարցուց վաղեմի վաճառականն սրոյ խնայողութիւնն այդքան ծանր ցնցմանց տակ՝ տկարանալու կ'սկսէր : — Ի՞նչպէս գլուխս կը դառնայ, հազիւ ըսածդ կը հասկնամ :

— Լսէ զիս, խեղճ բարեկամս : Խնայութեանցս շնորհիւ հայրենական ժառանգս եւապատկուած է, հարստութիւնս Մարխանայ օժիտ պիտի ընեմ, և յայտ պարագայի իւրեան և իւր ամուսնույն հետ պիտի բնակիմ : Եթէ, ընդհակառակն, ազջիկ մնայ, դարձեալ միասին պիտի շարունակենք ապրիլ, և օր մը իմ միակ ժառանգորդս պիտի ըլլայ : Նա կը հաւանի ինձ հետ ապրելու, և կը կարծէ թէ իւր այս հաւանութիւն և ոչ մի կերպիւ կը վերաւորէ ձեզ, տիկին, — հօրաբոյր Բուխամանս, յաւերցուց հարսին ուղղելով իւր

օգտակար եղած է, այլ այժմ, ցաւալի սընախառութիւններէ մտորեալ՝ քեզ այնքան աղետաբեր ըլլալ կ'սպասնայ որքան ժամանակ մը վրկարար եղած էր այն . . . Ոչ, չեմ ստիպեր քեզ ընդդիմանալու . . . Եթէ զիտնայի թէ կարող ըլլայիր դէմ դնելու՝ այսպէս չ'էի խօսեր : Գու բնութեանդ բարութիւնն և զգայնութիւնը զիտեմ, բայց տկարութիւնն ալ զիտեմ. եթէ բանականութեան ձայնըն իշխել տալ վորձես հոս, ինչպէս կ'ինդըսաւ քեզ՝ կեանքդ դժուար մը պիտի դառնայ . . . Ձիջիր, որպէս զի դժոխք չ'իյնաս . . .

— Ա՛հ, դու զիս կը սիրես, դու՛ . . . — մըմնչեց ցաւազին նախկին վաճառականն, — դու կը հասկնաս հօր մը վիշտերն՝ զորս խեղճ յիմար մը կ'ստիպէ յանարգարութիւն :

Տիկին ժուճրուա իւր ամուսնոյն վերջին բառերէն բարկացայտ՝ հօրաքեռ Բուխամանի բազկէն բռնեց ու ցտամամբ ըսաւ,

— Օրիորդ, այսպէս այլ ևս եղբայրնիզ մի զրդուէք ինձ դէմ, ապա թէ ոչ զիս կըստիպէք . . .

— Հանդարտ եղիք, տիկին, — պատասխանեց ծերունի ազջիկն աղնուական կերպով

քելոց վարժարանի նորոգութեան, գըրասեղանաց շինութեան և այլ պիտոյնց :

**ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՆՈՐՀ**

Մեծաւ դոհութեամբ կը ծանուցանենք թէ՛ Վեհ. Սուլթանը գնահատելով արտաքին գործոց նախարարութեան իրաւագէտ - Խորհրդական նորատունկեան Վսեմ. Գարրիէլ էֆէնտիի մատուցած բարւոք ծառայութիւնները՝ բարեհաճ է ն. Վսեմութեան ամսականին վրայ 2000 շուրուչի յաւելում մ'ընել :

**ԻՏՄԱՆ**

ԿԱՄ

**ՏԱՃԿԵՐԷՆ ՄՏԱՄԱՐՁՈՒԹԻՒՆ**

Տեր եւ Հրատարակիչ

**ՀԱՅ ԳՐԱԾԱՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ**

Սոյն տաճկերէն ընկերացանութեան գիրքն որ երեք մասերէ կը բաղկանայ, հաշակատր Թուրք գրագէտ և Օսմանեան բարձրագոյն վարժարանաց ուսուցիչ Ալի Նաշիմա պէյի կողմէ պատրաստուած է ըստ Բէ-

լիաիէի գրութեան, և որոյ առաջին մասին տպագրութիւնն արդէն սպառած լինելով, երկրորդ տպագրութեան արժանացած է կարեւոր յուելուածով, այն է՝ զժուարիմաց բառերուն բացատրութեամբն :

Սոյն դասագիրքն արդէն Օսմանեան, Յունական և Հրէական վարժարանաց մէջ մուտ գտած է գնահատուելով նոցա կրթական տեսչութիւններէն, և զոհութեամբ կը յիշատակենք թէ մեր կրթական ճեպարարներն ևս արժանացէն գնահատելով և Պատրիարքարանի կնքովի վաւերելով ներմուծած է զայն ընտրելով դասագրոց մէջ, իբր Օսմանեան ընկերացանութեան մէջ հատիկ դասագիրք մը :

Գինն է Ա. մասին 2 դր. Բ. մասին 2 ա. դր. և Գ. մասին 3 դր. :

Տպագրութիւն յոյժ մաքուր :

Աղղային վարժարանաց համար հարիւրէին 20 ղեղչ կը ըլլայ :

**ՊԱՐԳԵՒՍԻՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

**ԲԱՐԻՍ ՓԱՃԻԱԼԱՐԸ**

Թարգմանիչ Հրատարակիչ  
Յ. Թ. ՕԼԱԵԱՆ Կ. ՊԵՊԵՐԵԱՆ  
Այս վիպասանութեան Ա. հատորը լրացած և Բ. հատորն սկսուած է հրատարակիլ :

**ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ**  
Ընդգէմ գիջական, գաղղիական (ֆրէնկի) միզանցքաբորբոքային (պէլսուգլուզու) և այլ ավորոգիտեան հիւանդութեանց :

**ԳԻՆ 6 ՂՐՈՒՇ**

Կեղրոնատեղին է Պողոսեան գրատուն, Չաղմագ ճըլար-եօղուշ, Թ. 56 :

Սոյն առողջաբանական գործն իւր բաղմոքուտ և հետաքրքրաշարժ պարունակութեամբ կը գերազանցէ ցարգայս նիւթիս վրայ հրատարակեալ հին գործերն, (օրինակի համար Հայկու՛իի և Պագոտօօրնանի (Սննան տերեւերն, Գերեզմանք երիտասարդացն, Գաղանիք Բնութեան այլովքն հանդերձ) այնպէս որ այդ կցիտուր գրքերը կարգալու փափաքոյն, եթէ կարգայ ինքնապաշտպանութիւնն, ոչ ևս պէտք պիտի զգայ անոնց :

Գաւտաներէն ս'ի որ 7 գրուչի թըլթատարական գրուչի՛ զրկէ, յաջորդփոստով անմիջապէս կ'ստանայ մի օրինակ :

Տնօրէն եւ խմբագիր Մ. ԳԱՓՍՄԱՃԱՆ	Արտօճատեր Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ
ՏՊԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՊԵՊԵՐԵԱՆ	
Կ. Պօլիս Զիչեք-Փազար :	

մը բազուկն քաշելով, - այլ ևս ձեր տան մէջ իմ ներկայութիւնս ձեր վրայ բեռ չը պիտի ըլլայ :

— Բռնաւանս՛, ինչ կըսես :

— Եղբայր, այս տունէն կը մեկնիմ ահա, պէտք է որ բաժնուինք :

— Բաժնուինք, բայց անկարելի է այդ, չե՞ս մտածեր թէ քառասուն տարիէ ՚ի վեր միասին կ'ապրինք : Աստուած իմ, Աստուած իմ, ո՛հ, կարծես թէ զլուխս պիտի պայթի, արիւնն կը խեղդէ զիս, - մրմնջեց հեղ ժուֆրուա, որ արիւնային խառնուածքի տէր, գրեթէ կաթնուածոտ, զգաց թէ արիւնն ուժղընակի ՚ի սիրտն և յուղեղն կը յորդէր . յետոյ, վայրկեան մը վշտահար ըլլութիւն պահելէ վերջ՝ աղերսայի և հատկապէս ձայնով մ'ըսաւ՝

— Ոչ, ոչ, չը պիտի լքանես զիս : Ոչորմամ Յէր, միւսնոյն օրուան մէջ իմ հնազոյն բարեկամս և քոյրս կը բաժնուին, շնա է այս, շնա : Ոչ, չես կրնար թողուլ զիս այն պիտի տանն մը՝ յորում առաւել քան երբէք քեզ պէտք ունիմ : - Եւ յաւելցուց, խռովեալ և զրեթէ խելայեղ. - չեմ ուղեր կնոջս

հետ մինակ մնալ հոս : Կը վախնամ իրմէ այժմ . . . Է՛հ, այս կեանքս դժոխք դարձնել սպաննալէն ՚ի վեր կը վախնամ իրմէ :

Այս բառերն հակառակ աիկին ժուֆրուայի ցասկոտ բնաւորութեան՝ գառնապէս յուղեցին զինք :

Հօրաքոյր Բռնաւանս ևս գառնապէս յուղուեցաւ : Վայրկեան մը վարանեցաւ այս սրբազային մէջ եղբայրն թողուլ բաժնուելու : Բայց այնքան լաւ կը ճանչնար սարուն ժուֆրուայի բնութիւնն որ տկար, միայնգամայն բարի, և երկար տանէն ՚ի վեր կնոջ լուծին տակ էր, և իւր վարանմանէն ետ կեցաւ, և, ըսաւ :

— Խեղճ բարեկամս, քանի որ քու սոսփորականիդ համաձայն կնոջդ կամաց պիտի ենթարկես ինքզինքդ՝ հարսէս երկնչելու բընաւ տեղի չկայ : Այժմ ձեր երկուքին առաջարկութիւն մ'ունիմ ընելիք Մարիանի նըկատմամբ :

— Ինչ առաջարկութիւն, - հարցուց տիկին ժուֆրուա բաւական զարմացեալ, ինչ ըսել կուղէք, օրերդ :

— Եղբայր իմ, սրտիդ վիհանձնութիւնն